ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆՈՒՅՈՒՆ

7

ԴԱՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ

2021

Թեմա 1. Ե..Չարենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: Հղում՝ https://lib.armedu.am/resource/29287 էջ՝ 9-11

Աղբյուր՝ Դ. Գասպարյան. Գրականություն 7-րդ դասարան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 272 էջ:

1. Կարդա՛ «Ե. Չարենցի կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր պատկերը» նյութը և տեղեկությունները դասակարգիր համապատասխան գծակարգում (անհատական կամ խմբային աշխատանք):

V - գիտեմ

– - *իմ իմացածին հակասում է*

+ - *նոր տեղեկություն է*

! - *հետքրքիր է, կարելի է քննարկել*

V	-	+	!

2. Գտի՛ր յուրաքանչյուր տան բանալի բառը և համապատասխանաբար վերնագրի՛ր: Յուրաքանչյուր տան արտահայտած իմաստն արտահայտի՛ր մեկ ամփոփ նախադասությամբ:

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ձյունապատ լեռներ ու կապույտ լճեր:

Երկինքներ, որպես երազներ հոգու:

Երկինքներ, որպես մանկական աչեր:

Մենակ էի ես:

Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի

Ու նայում էի թափանցիկ հեռուն–
Զարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կարոտը այն հին, աստղայի՛ն, անհո՛ւն:
Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,
Խառնելով հոգիս աստղային մութին...

3. Ե. Չարենցի «Հայրենիքում» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր քեզ անծանոթ բառերն ու արտահայտությունները և բացատրի՛ր դրանց նշանակությունը:

4. «Հայրենիքում» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր բանալի բառերը և կազմի՛ր բովանդակությանը համապատասխան շարադրանք:

5. Հեղինակն ի՞նչ պատկերներով է ներկայացնում հայրենի երկիրը «Հայրենիքում» բանաստեղծության մեջ:

6. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը, քո կարծիքը «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության մասին:

7. Կետերը փոխարինի՛ր այլ մակդիրներով.

Ես իմ..... Հայաստանի..... բառն եմ սիրում,
Մեր..... սազի..... , ... լարն եմ սիրում,
..... ծաղիկների ու վարդերի բույրը ,
Ու..... աղջիկների..... պարն եմ սիրում:
Սիրում եմ մեր երկինքը. , ջրերը..... , լիճը.....,
Արևն..... ու ձմեռվա..... բուքը.....,
Մթնում կորած խրճիթների……..;պատերը սև
Ու..... քաղաքների..... քարն եմ սիրում:
Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած……...գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն……...վերքերը մեր
Էլի ես որբ ու..... իմ Հայաստան յարն եմ սիրում:
Իմ..... սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես……. ճակատ չկա,
Աշխա՛րհ անցիր, Արարատի նման……...զազաթ չկա,
Ինչպես..... ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

8. Ի՞նչ միտք ծագեց ընթերցելիս: Գրի՛ր քո մտահոգությունների մասին:

---

9. Ներկայացրո՛ւ բնագրի դրական ու բացասական իմաստով (հակադիր) գործածված մակդիրները:

Դրական	Բացասական

10. Ներկայացրո՛ւ Հայաստանի կերպարը՝ հետևյալ մակդիրները գործածելով. ***արևահամ, վառման, հեզաճկուն, մուգ, ջինջ, լուսե, վսեմ, հազարամյա, աղոթք դարձած, լուսապսակ, ճերմակ, անհաս փառքի ճամփա:***

---

10. Ներկայացրո՛ւ Հայաստանի կերպարը՝ հետևյալ մակդիրները գործածելով. ***ողբանվագ, լացակումած, արևանման, վիշապաձայն, մթում կորած, անհյուրընկալ, սև, ողբաձայն, արյունաքամ, ողբ, արևավառ, որբ:***

11. Գրի՛ր շարադրություն՝ «Ինչի՞ շնորհիվ գոյատևեցինք, կանք. ի՞նչը մեզ պահեց հայ» թեմայով:

12. Ի՞նչ կնկարես՝ որպես Հայաստանի խորհրդանշան՝ ելնելով բանաստեղծությունից:

13. Կարդա՛ «Տաղ անձնական» բանաստեղծության նշված տները և մեկնաբանի՛ր՝ կհեռանայի՞ր Հայաստանից. եթե այո՝ ինչո՞ւ, եթե ոչ՝ ինչո՞ւ:

Թողած Կարսում՝ գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,

Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով

Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով—

Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.

Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ ա՛չքս է հեռուն.

Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում—

Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ- մնա՛ս բարով, մնա՛ս բարով.

14. Բանաստեղծություններից ընտրված մեկ տունը վերլուծի՛ր՝ բնութագրելով քնարական հերոսին:

Անց եմ կենում, շուրջս-մարդիկ, շուրջս դեմքեր հազա՛ր-հազա՛ր.
Ծուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ով կասի, թե ո՞ւր հասար,—
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով:

15. Գրի՛ր սյուժետային շարադրություն՝ գործածելով հետևյալ բառակապակցությունները.

Կարսի այգի, անտաշ քարով շինված տուն, հայրենիմով երկինք , ամեն մեղքի համար, մնաս բարով չասած, օտար քաղաքների ճանապարհ, ներում ունեցող սիրտ, պիտի անդարձ հեռանալ,Կարինե Քոթանճյան, տապարով շինված դեմքեր:

16. Արտահայտի՛ր կարծիք և հիմնավորի՛ր ասածդ բանաստեղծության քնարական հերոսի վերաբերյալ:

17. Մեկնաբանի՛ր՝ ինչու է Չարենցը իր բանաստեղծություն վերնագրել «Տաղ անձնական»:

---

18. Օգտվելով Նաիրի Զարյանի կենսագրությունից՝ ներկայացրո՛ւ գրողի դերն ու նշանակությունը գրականության պատմության մեջ: Հղում՝ https://lib.armedu.am/resource/29287 (էջ՝ 104-106, *աղբյուր՝ Դ. Գասպարյան. Գրականություն 7-րդ դասարան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 272 էջ):*

Ուսումնական նյութը սովորողների կողմից լավ յուրացվելուց հետո ուսուցիչը խմբերին բաժանում է հետևյալ գծակարգը՝ լրացնելու (ԳՈՒՍ) :

Ի՞նչ գիտեինք:	**Ի՞նչ ովորեցինք:**	**Ի՞նչը մնաց անհասկանալ:**	**Ի՞նչ դիտողություն- ներ կամ առաջար- կություններ ունենք:**

19. «Հայրենի տուն» բանաստեղծությունը ներկայացրո՛ւ արձակ շարադրան- քով՝ օգտագործելով նաև հեղինակային բառապաշարը:

Հղում՝ **https://grakan.art.blog/2019/11/26**

---

20. Մեկ նախադասությամբ ձևակերպի՛ր «Հայրենի տուն» բանաստեղծության բովանդակությունը:

21. «Հայրենի տուն» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր մեկ բանալի նախադասություն, որը բնութագրում է ողջ բանաստեղծությունը:

22 «Հայրենի տուն» բանաստեղծությունից ընտրի՛ր մեկ բառակապակցություն, որը բնութագրում է ողջ բանաստեղծությունը:

23. Քո իմացած ո՞ր բանաստեղծությունների հետ ընդհանրություն ունի «Հայրենի տուն» բանաստեղծությունը:

24. Նկարագրի՛ր ձեր տունը՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ:

25. Նկարի՛ր էսքիզ կամ որևէ խորհրդանիշ, որն արտահայտի «Հայրենի տուն» բանաստեղծության գաղափարը:

26. Դատի՛ր «Հայերեն» բանաստեղծության հեղինակային գաղափարի, մտահղացման, հիմնախնդրի մասին:
Հղում՝ https://blog.times.am/?p=286348&l=am

---

27. Ներկայացրո՛ւ «Հայերեն» բանաստեղծությունում արտահայտված հույզերն ու ապրումները քառաբաժանի միջոցով:

Ի՞նչ էիր տեսնում «Հայերեն»-ը կարդալիս: ա/ բ/ գ/	**Ի՞նչ էիր զգում «Հայերեն»-ը կարդալիս:** ա/ բ/ գ/
Ի՞նչ կապ ես տեսնում մեր այսօրվա կյանքի հետ: ա/ բ/ գ/	**Նոր վերնագիր ընտրի՛ր:**

28. «Հայերեն» բանաստեղծությունում ներկայացրո՛ւ մտահոգությունդ մայրենին անաղարտ պահելու վերաբերյալ՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ: Հղում՝ https://blog.times.am/?p=286348&l=am

«Կրկնակի գրառումներով օրագիր»

1.	Ինչո՞ւ չես խոսում հայերեն:	
2.	Ես երգ եմ հյուսում քեզ համար:	
3.		
4.		
5.		
6.		

29. Ի՞նչ գույն ունի բանաստեղծությունը, արդյո՞ք մեկ գույն կարող եք նշել, եթե՝ այո՛, ինչո՞ւ, եթե՝ ոչ՛, ինչո՞ւ:

30. Արձակ շարադրանքով ներկայացրո՛ւ «Հայերեն» բանաստեղծությունը՝ բնագրից վերցրած հենակետային կամ բանալի բառերի միջոցով:

31. Կարդա՛ «Հայերեն» բանաստեղծությունը և քո վերաբերմունքն արտահայտի՛ր՝ պատասխանելով քառաբաժանի հարցերին:

1. Բնութագրող Բնութագրի՛ր բանաստեղծության լիրիկական հերոսին:	**2. Զգացմունքներ արտահայտող** Ի՞նչ զգացումներ ունեցար բանաստեղծությունը կարդալուց հետո:
3. Կենսափորձ Բանաստեղծության բովանդակութ- յունը ի՞նչ հիշեցրեց քեզ: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:	**4. Իմաստավորում** Նոր վերնագիր դի՛ր յուրաքանչյուր տանը՝ բովանդակությունից ելնելով:

32. Գտի՛ր օրինաչափություններ «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության հետ, նշի՛ր նմանություններն ու տարբերությունները:

33. Համեմատի՛ր Ն. Զարանի և Վ. Տերյանի բանաստեղծությունների տողերը, գտի՛ր նմանություններն ու տարբերությունները՝ զետեղելով վենի գծակարգում:

***«Դու չես հասկանում իմ լեզուն://Ես խորթ եմ, օտար քո հոգուն... »*, Ն. Զարանի:**

***«Մեզ չի հասկանա օտարերկրացին, // Մեզ չի հասկանա սառն օտարուհին»*, Վ. Տերյան:**



34. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր մակդիրներն ու համեմատությունները և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

35. Թեմատիկ գրավոր աշխատանք-1 (Ծիծեռնավանք-փոխադրություն, Թ. Թովմասյան, Գ. Մկրտչյան, Փոխադրության նյութերի ժողովածու, 5-9-րդ դասարաններ, Էդիթ Պրինտ, 2018): Հղում՝http://editprint.am/index.php?route=product/product&product_id=1046

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

Հոչանց գյուղի մելիք Թումանը շարունակ նեղացնում է գյուղի քահանային: Մելիքից ազատվելու համար սա մի անեծքաթուղթ է գրում, գցում նրա սենյակն ու փախչում: Այդ թղթի ուժով մելիքը կորցնում է կնոջը, որդիներին և ողջ հարստությունը: Հասկանալով, որ բոլոր դժբախտությունների պատճառը քահանայի անեծքն է, մելիքը գնում է՝ նրանից թողություն խնդրելու: Անցնելով շատ քաղաքներ՝ հասնում է Հռոմ և իմանում, որ քահանան արդեն վախճանվել է: Նա հուսահատությունից մնում է Հռոմի վանքերից մեկում՝ իբրև լուսարար, և միշտ աղոթում իր հոգու փրկության համար: Որոշ ժամանակ անց, մելիքը, չգիտես՝ ինչու, կծում է Պետրոս առաքյալի ճկույթը և պահում բերանում: Դրանից վանքի սրբապատկերները գետնին են թափում: Քահանաները փորձում են հանել մելիքի բերանից մասունքը ու սպանել նրան: Սեղանից մի ձայն ասում է. «Մի՛ մոտեցեք մելիքին»: Մելիքը անվտանգ գալիս է հայրենի երկիրը:

Պաշտամունք դարձած մի շլորի ծառի տեղում մելիքը վանք է կառուցում, ուր և ամփոփում է Պետրոս առաքյալի ճկույթը (ծիծեռնը): Դրա համար էլ վանքը կոչվում է Ծիծեռնավանք:

Ըստ Ա. Ղանալանյանի

ԲԱՌԱՐԱՆ

Շլոր – սալոր

Ծիծեռն – ճկույթ

Մելիք – իշխան

Առաքյալ – Քրիստոսի 12 աշակերտներից յուրաքանչյուրը, ով տարածում էր նրա ուսմունքը

Մասունք – եկեղեցական սրբերի կմախքի մասեր, որոնք հրաշագործ զորություն ունեն

Ամփոփել – այստեղ՝ թաղել

Հուշումներ

1. Տրված է բնագրի փոխադրման պլանը: Կարելի է օգտվել դրանից կամ կազմել նորը:

ա/ Մելիքը նեղացնում է գյուղի քահանային:

բ/ Քահանան անիծում է, և անեծքը կատարվում է:

գ/ Մելիքը ուղևորվում է՝ քահանայից ներողություն խնդրելու:

դ/ Մելիքը վանքում լուսարարի պաշտոն է կատարում:

ե/ Մելիքը գողանում է Պետրոս առաքյալի ճկույթը:

զ/ Քահանաներն ուզում են սպանել մելիքին, բայց ձայնը կանխում է:

է/ Մելիքը կառուցում է Ծիծեռնավանքը և ճկույթը պահ տալիս վանքին:

2. Նկարագրի՛ր, թե ինչպես է մելիքը նեղացնում քահանային, թվարկի՛ր դեպքեր:
3. Հիմնավորել, թե Աստծու սպասավոր քահանան ինչպես կարող էր անիծել, և դեռ ավելին, ինչո՞ւ է նրա անեծքը կատարվում:
4. Ճարադրՙիր, թե ինչու է ձայնը կանխում քահանաներին՝ իրագործելու իրենց թաքուն պլանը:
5. Ներկայացրո՛ւ՝ որտեղ է գտնվում Ծիծեռնավանքը և նկարագրի՛ր պատկերը:
6. Բնագի՛րը փոխադրիր որպես մելիքի անձնական խոստովանություն, որն արվել է մահվանից առաջ:

Գտնվում է Արցախի Քաշաթաղ շրջանում

36. Ներկայացրո՛ւ Հ. Ծիրազի կենսագրության հիմնական փաստերը, կապի՛ր դրանք նրա ստեղծագործությունների հետ: Հղում՝ https://lib.armedu.am/resource/29287 (էջ՝ 134-136, *աղբյուր՝ Դ. Գասպարյան. Գրականություն 7-րդ դասարան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 272 էջ):*

Ուսումնական նյութը սովորողների կողմից լավ յուրացվելուց հետո ուսուցիչը խմբերին բաժանում է հետևյալ գծակարգը՝ լրացնելու (ԳՈՒՍ) :

Ի՞նչ գիտեինք:	Ի՞նչ ովորեցինք:	Ի՞նչը մնաց անհասկանալի:	Ի՞նչ դիտողություններ կամ առաջարկություն-ներ ունենք:

37. Կենսագրությունից ելներով՝ գնահատի՛ր Հ. Ծիրազի կյանքն ու ստեղծա-գործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:

38. Արտահայտի՛ր սեփական կարծիք Ծիրազի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի՛ր իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ:

39. Նկարագրի՛ր գարնան գալուստը՝ ըստ տրված նկարի:

40. Նկարագրի՛ր «Թագադրում» բանաստեղծությունում պատկերված արթնացող բնությունը:

---

41. Մեկնաբանի՛ր «Թագադրում» բանաստեղծության քնարական հերոսի մարդկային ապրումները և հույզերը:

Բնութագրող Բնութագրի՛ր բանաստեղծության լիրիկական հերոսին:	**Զգացմունքներն արտահայտող** Ի՞նչ զգացումներ ունեցաք բանաստեղծությունը կարդալուց հետո:
Կենսափորձ Բանաստեղծության բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց ձեզ: Ի՞նչ համանման պատմություն եք ընթերցել կամ կինոնկար դիտել:	**Իմաստավորում** Նոր վերնագիր դի՛ր յուրաքանչյուր տանը:

42. Արժևորի՛ր բանաստեղծության արտահայտած հույզը և համեմատի՛ր քո զգացածի հետ:



43. Ներկայացրո՛ւ «Թագադրում» բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած գաղափարը:

Բովանդակությունը	Գաղափարը

44. Վերարտադրի՛ր «Թագադրում» բանաստեղծությունը արձակ շարադրանքով:

---

45. Համեմատի՛ր բանաստեղծությունը քեզ ծանոթ այլ ստեղծագործության հետ, ներկայացրո՛ւ քո դիրքորոշումը:

---

46. Զուգահեռներ անցկացրո՛ւ «Թագադրում» բանաստեղծության բովանդակության և հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև:

Բովանդակության	Հեղինակի կենսագրությունը	Ապրած ժամանակաշրջանը

47. Արտահայտի՛ր քո կարծիքը տրված բանաստեղծական տան վերաբերյալ:

Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ…

48. Հնարավո՞ր է մարդու անմահության երազանքն իրականանա, եթե այո՝ ինչո՞ւ, եթե ո՛չ՝ ինչո՞ւ :

49. Բնագրից դո՛ւրս գրիր մակդիրներն ու համեմատությունները:

Թեմատիկ պլան

Գրականություն

Դասարան՝ 7-րդ

Տարեկան ժամաքանակ՝ 102

Հեղինակ՝ Թամարա Թովմասյան (ծրագրի փորձագետ)

Հ.	ժամ	Թեմա	Վերջնարդյունք
		ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ	
	6/1	Ե. Չարենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը Գաղափար բանաստեղծության մասին:	*Ներկայացնի* Չարենցի կենսագրության հիմնական դրվագները: *Իմանա* բանաստեղծության ժանրային առանձնահատ- կությունները:
	6/2	«Հայրենիքում» բանաստեղծությունը	*Տիրապետի* թեմայում առկա նոր հասկացություններին, նոր բառերին և արտահայտություններին: *Մեկնաբանի՝* ինչ պատկերներով է հեղինակը ներկայացնում հայրենի երկիրը: *Իմանա* իր ազգային պատկանելության, հայրենի երկրի կարևորության մասին:
	6/3	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը	*Ներկայացնի* բանաստեղծության հիմնական բովանդակությունը: *Ներկայացնի* Հայաստանի կերպարը ըստ բանաստեղծության: *Ուսումնասիրի և մեկնաբանի* գրողի օգտագործած բառապաշարը և պատկերավորման միջոցները և դրանք *գործածի* խոսքում:
	6/4	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը	Բանաստեղծությունից սովորած նոր բառերով *կազմի* նախադասություններ կամ գրավոր կապակցված խոսք: *Մեկնաբանի* բանաստեղծության տրված հատվածը:

	6/5	«Տաղ անձնական» բանաստեղծությունը	*Դատմելիս* օգտագործի հեղինակային բառապաշարը, *անվանի* տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: Համատեքստային բառերը, սովորած պատկերավորման միջոցները *կիրառի* խոսքում: *Գնահատի* բնագրի բառապաշարը և հարստացնի սեփական բառապաշարը:
	6/6	«Տաղ անձնական» բանաստեղ-ծությունը	*Դուրս գրի* համատեքստային բառեր ու դրանք կիրառի խոսքում: *Ներկայացնի՝* «Տաղ անձնական» բանաստեղծութ- յունը ինչու է վերնագրել «Տաղ» և ինչու «անձնական» վերնագրով:
	3/1	Նաիրի Զարյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: «Հայրենի տուն» բանաստեղծությունը:	*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը և ապրած ժամանակաշրջանը: *Մեկնաբանի* հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունն իր վրա: Բանաստեղծությունը *ներկայացնի* արձակ շարադրանքով:
	3/2	«Հայրենի տուն» բանաստեղծությունը	*Ներկայացնի* բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: *Թվարկի* ստեղծագործություններից մի քանիսը: Արտահայտիչ *կարդա* կամ *արտասանի* բանաստեղծությունը: Բանաստեղծության մի տունն *վերարտադրի* նկարի միջոցով: *Նկարագրի* իրենց տունը՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ:

	3/3	«Հայերեն» բանաստեղծությունը	*Արտահայտի* իր մտահոգությունը մայրենին անաղարտ պահելու վերաբերյալ՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ: *Մեկնաբանի* մակդիրների ու համեմատությունների կիրառման արժեքը բնագրում: *Գտնի* օրինաչափություններ «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության հետ, *նշի* տարբերությունները: Բանաստեղծության և կյանքի միջև կապ *տեսնի:*
	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-1**	
	4/1	Հովհաննես Ծիրազ: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Թագադրում» բանաստեղծությունը	*Ներկայացնի* Հ. Ծիրազի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք նրա ստեղծագործությունների հետ: *Գնահատի* Հ. Ծիրազի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: *Արտահայտի* սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ: *Արժևորի* բանաստեղծությունում պատկերված արթնացող բնությունը, մարդկային ապրումը և հույզը, *համեմատի* իր զգացածի հետ:
	4/2	«Թագադրում» բանաստեղծությունը	*Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած գաղափարը: *Ներկայացնի բ*անաստեղծի անձնական ապրումներն ու բնության պատկերների զուգակցումը բանաստեղծու- թյան մեջ: *Մեկնաբանի* բանաստեղծությունը՝ զուգահեռներ անցկացնելով բովանդակության, հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև:

			Համեմատի բանաստեղծությունը իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ՝ ներկայացնելով իր դիրքորոշումը: